Գ. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 12 ՓԵՏՐՈՒԱՐ 1900 — ԹԻՒ 204

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Դրանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

Պուլկարիոյ համար ձեռքի
)(ԳԻՆ 15 ՍԱՆԹԻՄ)(

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Դրամ դրկել
գրութեանս հասցէին
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)
—
Գրութիւնք ետ չեն տրուիր

Արտասահմանի համար ձեռքի
)(ԳԻՆ 20 ՍԱՆԹԻՄ)(

R. P. Kalémkar
Mechitharistengasse W. 4
Vienna
(Autriche)

ԱԶԳ

—

Ընթերցասիրաց ընկերութիւնը ներկայիս ուրախութեամբ կուգայ ծանուցանել տեղւոյս արդոյ հայ հասարակութեան թէ՝ վերջերս հաստատած է Ընթերցարան մը որ, կը գտնուի Բ. Թաղ, Պուլկարական ազգային «գլխաւոր» տակը։

Առ այժմ, մինչ ցնոր տնօրինութիւն, Ընթերցարանը կը բացուի ամէն օր, առաւօտեան ժամը 9ին և բաց կը մնայ մինչեւ ժամը 11 1/2. կէս օրէն վերջ ժամը 1—9 դիշերուան. իսկ շաբաթ օրերը՝ բացառաբար ստիպողական և այլ բանաւոր պատճառաւ Ընթերցարանը պիտի բացուի առաւօտեան ժամը 9—12ու յետ միջօրէի ժամը 3—9 դիշերուան։

Այս առթիւ ընկերութիւնս պարտք կը համարէ հրաւէր կարդալ ուսումնասէր արդոյ ազգայնոց Ընթերցարան յաճախել և իրենց պարապոյ ժամերը օգտաշատ ընթերցանութեամբ անցընել։

Կը խնդրուի նաեւս, ամէն անոնք որք՝ կը փափաքին ոեւէ նուիրատուութեամբ Ընթերցատան ճոխացման գործին սատար հանդիսանալ. այդպիսիք՝ թող հաճին մեզ փութացնել իրենց նուէրը, կանխաւ յայտնելով իրենց մեր անկեղծ շնորհակալեաց հաւաստիքը։ Մնամք

Վարչութիւն Ընթ. Ընկ.
Վառնայի
(ԿՆԻՖ)

Վառնա, 5 Փետրուար

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—

Պուքրէշ, Պ. Ա. Պարագեան. — Կը սպասենք դրամները եւ չի վճարող բաժանորդներու ցանկը, որպէս զի թերթը դադրեցնենք։

— Պ. Ճիվէլէկկան. — Կը խնդրենք առանց ուշացնելու դրկէք Քէօսէնճէէն գանձած բաժնեգիները։

— Զերնա Ոդա, (Ռումանիա). — Թերթը կը դրկենք, բայց դրամը ուղղակի խմբագրութեանս հասցէին դրկեցէք, որովհետեւ Քէօսէնճէ առ այժմ մենք գործակալ չունինք։

— Նիւ-Եորք, Բօլ Ճիկէրեան. — Կսպասենք որ 1898ին Քէօսէնճէէն գանձած դրամներուդ մանրամասն հաշիւը եւ դրամը ուղարկէք։ Մենք ունինք ձեր նամակները որով դեռ երկու տարի առաջ կը խնդրէիք սպասել. կը կարծենք թէ չատ եւ չատ սպասեցինք։

——).(——

ԼԵՀ, ՓԻՆՆ ԵՒ ԲՕԷՐ

—

Անցեալ օրերը իմացանք թէ՝ Լեհ երիտասարդութիւնը դեռ չէ յուսահատած իր ժողովրդի ապագայի մասին և ծրագիրներ է մշակում օգտակար հանդիսանալ նրա ազատագրութեան գործին։

Դեռ երեկ, Ֆինլանդիայից սկսեցին տեղալ բնորոշիչ տեղեկութիւններ՝ հաստատող թէ Ֆինլանդական փոքրաթիւ ժողովուրդը որչա՜փ յանդուգն կերպով է յայտարարում իր արհամարանքը դէպի ամենակուլ Ռուսիան, սրա բռնակալական ձգտումների պատճառով, և թէ ի՞նչ աներեւակայելի ճիգեր է թափում չը ենթարկվել լուծվելու համար ստեղծված նոր օրէնքներին։

Մեր աչքի առջև են բօէրները, քաջարի հայրենասէրներ, որոնք՝ այր, կին և մանուկներ ձեռք ձեռքի տուած կատաղի կերպով մարտ են մղում հսկայական Անգլիայի դէմ, իրենց ինքնուրոյնութիւնը և նոր, բայց իրենց քրտինքով ոռոգած սիրելի հայրենիքը օտարի ճնշումից ազատ պահելու համար։

Ահա ձեզ փոքրիկ ժողովուրդներ, որոնք՝ հսկայ, գազան, իրենցից աներեւակայելի չափով զօրեղ հակառակորդների դիմաց խրոխտ և յանդուգն կերպով կանգնած՝ անվհատօրէն մղում են իրենց անկախութեան, ինքնուրոյն գոյութեան կռիւը։

Ցած սարկութեան տիպարներ, դերութեան սարկահոգի քարոզիչներ չունեն այդ ժողովուրդները. երջանիկ են և համակրութեան ու սիրոյ արժանի։

Մեզնից աւելի զարգացած, և աւելի ապահով կեանքով—միմիայն բարոյական ճնշումի համար՝ վտանգի են ենթարկում ամեն բան, կուելու շատ ու շատ անգամ զօրեղ թշնամիների դէմ։

Արդեօք դրանք էլ նոյն մսից և արիւնից չեն կազմվա՞ծ. դրանք էլ նոյն մարդիկը չե՞ն. արդեօ՞ք հայերիցս տարբեր կերպով են ստեղծված։

Ի՞նչու, Լեհը կարող է Ռուսի դէմ մարտնչել. այն էլ այնքան մեծ, մեզնից շատ դառն և անյայտնի փորձերից յետոյ։ Ի՞նչու Ֆինլանդացին յանդգնում է Ռուսին դիմադրել՝ թէեւ լաւ գիտէ նրա սարսափելի ուժը. ի՞նչու բօէրը իր կնոջով և մանուկով միասին պատերազմի դաշտ է դուրս գալիս, Նապոլէօնին գերող և աշխարհը սարսեցնող Անգլիայի դէմ...

Որովհետեւ այդ փոքրիկ ժողովրդների համար ազատութիւնը գոյութեան առաջին պայմանն է. որովհետեւ այդ ժողովրդները հայերէս նման սարկութեան չնաշխարհիկ քարոզիչներ չունեն...

Որովհետեւ այդ ժողովրդները բռնակալների՝ նոյնիսկ ամենաբարի և ազատամիտ բռնակալների, չծի տակ սողալով ապրելուց գերադասում են «ազատական մահը»։

Այս, օրինակելի և ամեն սարուկ ժողովրդի համար իբր իդեալ ծառայելու արժանի ժողովրդներ են այդ փոքրիկ, բայց ասպետական և ազատասէր ժողովրդները, որոնք ազատութեան սիրով վառված թէեւ անհաւասար, բայց յանդուգն կռիւ են մղում իրենց բռնակալների դէմ։

ՎԱՐԴՕ

ՀԱՄԵՍՏ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

—

«Շարժումի» Աղեքսանդրիոյ նորեկ թղթակիցը «Խցիկ» անցեալները իր մէկ թղթակցութեան մէջ կանգատելով իշխան Լուսինեանի օտարներուն ըրած նուիրատուութեան դէմ, իբրեւ ամէն քաջալերութեան և նուէրի արժանի վստահելի մարմին մը կը յանձնարարէր Աղեքսանդրիոյ «Ազգային մատենադարան»ին վարչութիւնը։ «Շարժումի» ընթերցողները կը յիշեն անշուշտ որ Եգիպտոս գտնուած միջոցին տեղեկութիւններ հաղորդած էի այս անուանական հաստատութեան մասին, որ իրեն նպատակ ընտրած է ամբողջ հայերէն հրատարակութիւններու «լիակատար շտեմարան» մը կազմել։ Այս խոշոր գաղափարը յղացող վարչութեան վստահելի ըլլալուն դէմ առարկութիւն մը չունինք, որովհետեւ հանրային գործի մը ձեռնարկող ոեւէ մարմինի մը բարոյական նկարագիրը գործնական առպարէզի մէջ միայն կը յայտնուի։ Մինչդեռ երկու տարիէ ի վեր կազմուած այդ վարչութեան ամբողջ գործունէութիւնը լոկ ռէկլամներ հրատարակելու թերթերու մէջ յայտարարութիւններ տպել տալէ անդին չէ անցած և նոյնիսկ Աղեքսանդրիոյ մէջ բացի վարչութեան անդամներէն ոչ ոք գիտէ թէ ո՞ւր է զետեղուած այս շարունակ հրապարակաւ յեղյեղուող «շտեմարան»ը, ուր զանազան տեղերէ իբր նուէր ստացուած գրքերն ու թերթերը կը լեցուին. երանի՞ պարոն Խցիկին եթէ կրցած է այս գաղտնիքը գտնել։ Նպատակին օգտակարութեան դէմ՝ ալ բան մը չունինք առարկելու, անշուշտ շատ փափաքելի է ունենալ այսպիսի կատարելագործուած հիմնարկութիւն մը, ուր ոեւէ հայերէն հրատարակութենէ մը օգտուելու համար գիմողները ապահով պիտի ըլլան «չիկա»ի անախորժ պատասխանով ետ դառնալէ։ Սակայն ինքնըստինքեան օգտակար համարուած շատ մը յղացումներ իրենց արժէքը կը կորսնցնեն և մինչեւ իսկ աւելորդ կը նկատուին երբ միջավայրին զանազան պահանջումներուն ու անհրաժեշտութիւններուն հետ համեմատութեան դրուին։ Այս ամենապարզ ճշմարտութեան հիման վրայ բաւական է կտրուկ ակնարկ մը միայն նետել Եգիպտոսի հայգաղթականութեան միջավայրին վրայ, համոզուելու համար որ արդի կացութեան մէջ «շտեմարան»ի պէս մեծ ձեռնարկութիւնները պարզապէս պերճանքներ են։ Երեւակայեցէք որ մտաւոր ու բարոյական զարգացումի ամէն դիւրութիւն և անսահման ազատութիւն մը ունեցող այս գաղութը այսքան տարիներէ ի վեր չէ ու-

նեցած գէթ պզտիկ հաստատութիւն մը՝ ըլլայ լսարան կամ ընթերցարան՝ ուր թշուառ դաղթականները կարենային օգտակար ժամանց մը վայելել։

Ու անոնք որ այս անհրաժեշտ պէտքը հոգալու միջոցներ ունէին՝ ահա՛ երկու տարիէ ի վեր իրենց երեւակայութեանը զօր տուած խոշոր բառերով ժամավաճառ կըլլան։ Ցարդ ինչպէս կիմանանք հազիւ թէ 50—60 հատոր գիրք և քանի մը թերթ կրցած են շտեմարանել ու այս ընթացքով ապահովաբար դեռ քանի մը տասնեակ երկու տարիներու պէտք կայ, որպէս զի այդ շտեմարանը լեցուելով իր դռները բանայ հասարակութեան առջեւ։ Մինչդեռ անհամեմատ աւելի մեծ յաջողութիւն մը և օգտակար արդիւնք մը կունենայ միւնոյն նպատակով և նոյն միջավայրին մէջ հիմնուած ուրիշ համեստ հաստատութիւն մը, որուն քառամսեայ վիճակացոյցը այս օրերս ստացած ըլլալով, ուրախ ենք որ պիտի կրնանք քանի մը շահեկան մանրամասնութիւններ տալ «Շարժումի ընթերցողներուն. ապացուցանելու համար որ մեր հասարակութիւնը գիտէ իր կարողութեան չափով քաջալերել ոևէ հանրօգուտ ձեռնարկութիւն. պայմանաւ սակայն որ գործողները իրենց միջավայրին անմիջական պահանջումներուն և ոչ թէ իրենց երեւակայութեան թելադրութիւններուն համեմատ գործեն։

Հակիւ տարի մը առաջ քանի մը զարգացած երիտասարդներ, որոնք իրենց պարապոյ ժամերը նուիրած էին Աղեքսանդրիոյ Դաշնակցական խումբերուն մտաւոր և բարոյական զարգացումին՝ տեսնելով որ անկարելի է առանց ընթերցանութեան այդ օգտակար գործը կատարելապէս յառաջ տանիլ, կը խորհին գրքերու և թերթերու համեստ հաւաքածոյ մը կազմել։ Այս նպատակով դիմումներ կընեն զանազան տեղեր, իրենց ծանօթներու տուներէն գրքեր կը հաւաքեն ու քիչ ժամանակէն կը գոյանայ փոքրիկ գրադարան մը, որ Դաշնակցական խմբերու հաւաքասրահին մէջ կը դրուի թէ այդ խմբերը կազմող 50—60 գործաւոր երիտասարդներու և թէ բոլոր ընթերցասէրներու տրամադրութեան տակ։ Գործը այնչափ անակնկալին մէջ 5—6 ամիսներ չարունակելէ յետոյ՝ այն աստիճան շօշափելի արդիւնքներ կուտայ, որ նախանձողները կորոշեն՝ անոր օգտակարութեան սահմանը ընդարձակելու համար հրապարակային տեղ մը փոխադրել զայն։ Նիւթական միջոցները կը պակսէին, սակայն Դաշնակցութեան Աղեքսանդրիոյ կոմիտէին նախաձեռնութեամբ հանգանակութիւն մը բացուելով՝ մեծ հրապարակին վրայ կոկիկ խանութ մը կը վարձուի և գրադարանը «Աղեքսանդրիայի ժողովրդական գրադարան-ընթերցարան» անունով կը սկսի ամէն օր առաւօտէն մինչեւ կէս գիշեր կանոնաւորապէս իր դռները բանալ հաւասարակութեան առջեւ։

Լոկ խումբ մը երիտասարդներու եռանդուն գործունէութեան շնորհիւ ոչինչէն ստեղծուած այս գրադարան-ընթերցարանի (1899 Մեպտ. 1—1899 Դեկտ. 31) քառամսեայ վիճակացոյցը մեծ խնամքով ու կանոնաւորութեամբ պատրաստուած՝ կը ցուցնէ որ հիմնարկութիւնը իր գոյութեան այս չորս ամսուան ընթացքին մէջ 3475 ½ Եգիպտական ոսկի դահեկանի պիւտճէ մը ունեցած է։ Ասոր 1376 դահեկանը զուտ հասոյթ՝ տրուած է գրքերու ու զանազան գոյգերու և 208 դահեկան ալ պահեստի դրամ մնացած է։ Հասոյթի աղբիւրները կը կազմեն նուիրատուութիւնները, նիւթապէս կարող ընթերցողներու վճարած կամաւոր բաժնեգիները և պիւֆէի սպառումները, որոց մէջէն բացարձակապէս արտաքսուած են ոգելից ըմպելիները։ Գրադարանը ունի 422 հատոր ընտիր գրքեր որոնցմէ 43ը ֆրանսերէն, իսկ մնացածները ամբողջովին հայերէն են, և կը ստանայ 26 հայերէն թերթ ու հանդէս։ Այս կարճ ժամանակամիջոցին մէջ ընթերցարան յաճախած են 100 հոգի, որոնց կէսը՝ գործաւորներն ու արհեստաւորները կը կազմեն, և գրքերու շրջաբերութիւնը 961ի հասած է։

Այս թիւերը անշուշտ հեռագնտ զգալի կերպով պիտի աւելնան ապագային մէջ, բայց արդէն այսչափն ալ շատ յաջող սկզբնաւորութիւն մըն է, է երբ նկատի առնենք որ Աղեքսանդրիոյ գաղթականութիւնը տարիներու բարոյական լքումին ու անտարբերութեան երեսէն վարժուած էր ազատ ժամերուն գինետուններն ու սրճարանները առնել իր շունչը։ Այսուհետեւ այդ վայրերու ապականարար մթնոլորտէն պիտի փրկուին հետզհետէ շնորհիւ այս նորահաստատ հիմնարկութեան, որ խաղաղիկ ու ախորժելի ժամանց մը կը հայթայթէ իրենց։ Որչա՞փ չարիքներու և որչա՞փ մոլութիւններու առաջքը առնուած պիտի ըլլար և քանի՞ քանի՞ երիտասարդներ փրկուած պիտի ըլլային դէպի իրենց հայրենիքը անտարբերութեան ու օտարացումի մեղկութենէն՝ եթէ երկու տարիէ ի վեր հրապարակի վրայ իրենց յայտարարութիւնները պարտցնող մեր «Շտեմարան»ները, կանուխէն այս տեսակ համեստ գործի մը ձեռնադրէին՝ փոխանակ մեծազործութիւններու ուղղ յոգնեցնելու։ Եթէ Եւրոպական յառաջադէմ ազգերու մեծ մատենադարաններուն կը նախանձին, պէտք է գիտնան որ անոնք գիտական այդ մեծ հիմնարկութիւններուն քով ունին բազմաթիւ ժողովրդական հիմնարկութիւններ ալ, որոնք գիտութիւնն ու կրթութիւնը հանրացնելու կը ծառայեն. օրինակ Ցիւրիխի պէս փոքրիկ քաղաքի մը մէջ ամէն թաղ իր ժողովրդական ընթերցարանը ունի։ Հիմա իսկ, երբ արդէն ընթերցարանի պէտքին գոհացում տրուած է Աղեքսանդրիոյ մէջ «ժող. գրադարան-ընթերցարան»ի հիմնարկութեամբ՝ կայ ուրիշ նոյնչափ կարեւոր պէտք մըն ալ ժող. լսարան-վարժարան մը, որ շատ աւելի անմիջական պահանջ մըն է, քան ազգային մատենադարանը։ Ուրկէ չենք գիտեր թէ մեր «՞ր գիտնականները կամ բանասէրները պիտի օգտուին։ Վարչութիւնը, զոր դիրքի տէր անձնաւորութիւններ կը կազմեն՝ կրնայ ամենայն դիւրութեամբ գլուխ հանել այս գործը, որ ընթերցարանին սերտ լրացուցիչը պիտի ըլլայ։ Վերջերս քանի ճշգիմարարածներ ձեւացուցած են «Ուսանողաց Միութիւն»։ Ասոնք ալ ունին գրադարան մը, սակայն ասոնք ալ ունին գրադարան մը, սակայն ասոնք ալ ունին գրադարան մը, սակայն

սումնասրահ» անունով բան մը, բարի նախանձէն շատ տարբեր զգացումներէ առաջնորդուած, որ սակայն ո և է օգտակարութիւն չունենալէ զատ՝ կուսակցական ամենացած կիրքերով ու իմաստակութեամբ պիտի վարակէ միամիտ յաճախողները։

Վերջացնելով ի սրտէ յաջողութիւն կը մաղթենք «Ժող. գրադարան-ընթերցարան»ի վարչութեան և կո՛չ կընենք ժողովրդի կրթութեան բոլոր ճշմարիտ բարեկամներուն որպէսզի իրենց ձեռնարկութեամբը քաջալերեն այս գերազանցօրէն օգտակար հաստատութիւնը։

Հասցէն.

Bibliotheque populaire Armenien
poste restante Française
Egipte Alexandrie
ԿԱՐԻՃ

Ցիւրիխ, 9 Փետրուար

ՆՈՐ ՄԵԹՈՏ ԵՒ ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Զարդի արհամարհանքներէն դեռ նոր ազատած երբ Ամերիկա եկայ, եւ առաջին անգամ Մարտի թիւը ձեռքս անցաւ կը կարդայի եւ զանազան ուշագրաւ կէտերու մէջը կը մնայի լուծում չի կրնալ տալուս. շատ անգամ մտքիս առարկայ չընելու համար ինձ ու ինձ կըսէի. կերեւի ես այս մեթոտիկ յեղափոխական քարոզչութիւնը չը գիտեմ ըմբռնել։ Եւ գուցէ, հեղգհեղգ կը վարժուիմ, եւ շատ անգամ ալ չի կրնալով հաշտուիլ իմ մտքի ու համոզման, մանաւանդ հայ ազգի դառն պարագաներու հետ՝ կը մտածէի. այս նոր մեթոտ, նոր ուղղութիւն է—նպատակը քառասուն օրէն յայտնի կը լինի—ես չէի գիտեր այն ատեն թէ Մարտը արդէն իր երկրորդ քառասունքը անցուցեր էր։ Մինչեւ այդ ատեն դեռ Դրօշակ կարդացած չէի, եւ չէի ալ ուզեր կարդալ. պատճառը՝ համարեայ Մարտի բոլոր գրողներն եւ կամ Մարտ ինքն իր ամբողջութեամբն էր։ Մարտ իբրեւ յեղափոխական թերթ, բոլոր գրողները քարոզիչներ էին՝ եւ գրուածքներու մէջ կը տիրէր մի տեսակ խրատական եւ քարոզչական մեթոտ...

Ամէն մի գրող, մէն մի հրապարակագիր այսպէս կը գրէր. «մեր ազգը ուսում չունի. մեր սիրելի ազգը բարոյական պակասաւոր կողմերունի, մեր ազգը տգէտ է, մութի մէջ է, եւ այլն. հարկաւոր է որ հայոց ազգը լուսաւորուի, ա՛խ երբ կը լուսաւորուի մեր սիրելի ազգը»։ Հետեւելով ու հետեւելով այդ քարոզչական սխալ մեթոտին, կրկնելով այս ժառանգական գանգատը, սկսեցին գլխիկոնծունք ընել ըսելով. «մեր խեղճ ազգը ուսում չունի. ա՛խ նա երբ կը լուսաւորուի»։

Մամուլը, այսօրինակ գանգատներով ո՛չ թէ միայն չէր կրնար այդ բանալ ազգը լուսաւորելու, այլ եւ մեծ յանցանք կը գործէր. որովհետեւ՝ երբէք չէր ձգտիր ուսումնասիրելու ժողովրդի ներկայ եւ իրական կեանքը, երբէք չէր ուզեր փաստեր հաւաքել հայ կեանքի մասին, որոնց վրայ կարելի էր հիմնել այս կամ այն կարծիք։

Մարտի քարոզչական ու խրատական մեթոտին հետեւող մեր գրողները, իրենք իրենց միեւնոյն ժամանակ տեսակ մը տարօրինակ եւ ծիծաղելի սխալ հասկացողութիւն էին կազմեր. կերեւակայէին—մտացորդներն ալ այժմ դեռ այն կարծիքէն են—թէ շատ լաւ գիտեն ու կը ճանչնան հայ ժողովուրդը եւ շատ լաւ են ուսումնասիրած անոր պիտոյքները, կեանքն ու տառապանքները։

Դեռ անոնցմէ մէկը երեկ հոս (Ուսար) կատեդրանէր—«մենք գիտենք հայոց պատմութիւն, մենք գիտենք Վահան, Ղեւոնդ, Տաճատ. լաւ ենք ուսումնասիրած՝ Ագաթանգեղոսը, Խորենացին, Բիւզանդը. մենք քաջ ծանօթ ենք հայի գրաբառ լեզուին» եւ այլն, եւ այլն...

Ասկէ կը հետեւցնեն թէ հայ ժողովուրդի կեանքը իրենց լաւ ծանօթ է։ Դիտեմ, բայց նոր հասկցայ ճշմարիտն ըսելու համար թէ՝ անոնց համար հայի անցեալը ամէն բան է, ներկան երկրորդական նշանակութիւն ունի, իսկ ապագայի մասին երբէք չեն մտածեր, եւ որու հոգն է հասեր...։

Հիմնուելով այն սխալ հայեացակէտի վրայ՝—նոր մեթոտ եւ նոր ուղղութեան—թէ իմանալով հայոց պատմութիւնը, լաւ տեղեակ լինելով հայոց գրաբառ լեզուին եւ կարդացած լինելով կրօնական ոգւով ներշնչուած հայ մատենագիրները՝ կը կարծէին թէ կարելի է ուսումնասիրել հայ ժողովրդի կեանքը. Մարտին կը ձայնակցէին Նոր կեանքն ու Ամերիկա հրատարակուող Զայն Հայրենեացը. սա տարբերութեամբ որ վերջնոյն էջերը առ հասարակ լեցուած են եղերով, կովերով եւ շուներով, իսկ հայհոյութեան չափը չի կայ. այս առթիւ ուրիշ անգամ այժմ մեր նիւթէն չի շեղելու համար։

Առ հասարակ Մարտի գրողները ոուսահայի եւ թրքահայի միջեւ հրատարակած զզուելի պատերազմով ալ այնտեղ հասան որ սկսեցին անտես առնել հայ ժողովրդին տառապեցուցիչ կեանքը ու անտանելի դրութիւնը. նոյնիսկ անոր առօրեայ ցաւերը ու ժամանակակից պահանջները։ Ասոր ալ հետեւանքը այն եղաւ որ Մարտի գրողներէն եւ ոչ մին գրեց՝ չի կարողանալով այդ բանալ զանազան վէճերէ—մեր ըսածը կը հաստատեն մինչեւ ցարդ այդ կեդրոնի մէջ տեղի ունեցած վէճեր եւ անկարգութիւններ — թէ ի՞նչպէս կապրի հայ ժողովուրդը այն երկրի մէջ, որը Տաճկաստան կը կոչեն, թէ ի՞նչպէս է հայի դրութիւնը. ի՞նչ է անոր պահանջը. եւ ո՞րն է հայաբերին սպառնացող վտանգը, եւ կամ այդ վտանգին դիմադրաւելու այսինչ կամ այնինչ միջոցները։

Եւ ահա այս պատճառներով, նոյն այն մարդիկ, որոնք կը կարծէին թէ աւելի լաւ կը ճանչնան տաճկահայերը, որովհետեւ իրենց մանկութեան ժամանակ «տօլմա, փիլաւ եւ հաց ու պանիր» են կերեր, ուստի «ժողովուրդի սրտէն կը խօսին, ժողովրդեան կեանքէն կը գրեն»—իսկապէս երբէք չի ճանչցան հայ ժողովրդը, եւ անընդունակ եղան ու անընդունակ ալ պիտի մնան արծարծել այնպիսի խնդիրներ որոնց թարգմանը հայ ժողովուրդն է. եւ որոնք դուրս կը բղխին հայ ժողովուրդի ներկայ տխուր եւ անտանելի իրական կեանքէն։

Այլ կերպ վարուեցան Դրօշակ եւ Հնչակ։

* * *

Դրօշակը եւ Հնչակը ոչ թէ միայն հայ գիւղացիին եւ քաղաքացիին քարոզիչներ եղած են, այլ հետազօտիչներ ու անոնց իղձերուն—առանց աղաչելու—բուռն թարգմանը։ Ասկէ կը հետեւցնենք թէ վերջիններս աւելի ճիշդ կրցած են ըմբռնել ու հասկնալ հայ ժողովրդն իր բոլոր պահանջներով։ քան այն մարդիկ որոնք ինքզինքին կը համարեն հայու կեանքին լաւատեղեակներ։

Ռուսահայեր հետեւելով հետազօտիչ գիտութեան ճշգրիտ մեթոտին, ուսումնասիրելով թրքահայերուս կեանքը իր բոլոր երեւոյթներով, նախ պատկերացուցին մեր կեանքը, եւ ապա նոյն այդ իրական կեանքի վրայ սկսեցին հիմնել իրենց բոլոր եզրակացութիւններն ու գործունէութիւնը, իսկ դուք բերանիդ կրակ իյնալիքներ, դուք... ի՞նչ ըրիք. միայն պղծեցիք աշխարհի մէկ սրբութիւնը—յեղափոխութիւնը—ուզեցիք սպաննել հայի սրտի մէջ յեղափոխութեան բոլոր իղձերը, եւ ամլութեան դատապարտեցիք։ Այս չէ եղե՞ր ձեր գաղտնի գործունէութեան «նոր մեթոտի եւ նոր ուղղութեան» բոլոր գաղտնի՞քը, որը դուք կը կոչէք գաղտնի գործունէութիւն։

Դուք պարոններ հաւկիթին մէջ միանգամայն չափազանց հակառակ էին անոնց։ Ինչպէս Դուժիք նմանապէս կինճ համարէ թէ անկախ կապրէին, մինչեւ այս վերջին պատերազմն. իսկ պատերազմէն յետոյ, Արիճ փաշան ի նկատի առնելով, այդտեղ կառավարութիւն մը հաստատելու համար միջոցներ ձեռք առաւ եւ Բ. Դոնէն հրաման խնդրեց։ Բ. Դուռը փաշայի տեղեկագիրն նկատողութեան առնելով առանց վարանման մէկէն մինիհաւրմղրիւ հռչակեց, Պիթլիսի կառավարութեան հետ կապելով։

Երբ Արիճ փաշան Պիթլիս մտաւ, իր առաջին գործն եղաւ, քիւրտ աղաներու, աշիրէթներու, աւազակներու եւ պետերու հետ բարեկամութիւն հաստատել. Բ. Դոնէն հրահանգուած էր՝ ներքին կործանարար ուժ մը անոնց մէջ ներշնչել, որպէսզի՝ ազատ համարձակ ուղածնին ընեն հայոց. եւ այսպէս վեց ամիս շարունակ ատոնց մէջ պտտելէ յետոյ Պիթլիս վերադարձաւ, ամէն բան կազմ եւ պատրաստ վիճակի մէջ դնելէ յետոյ։

Ո՛րքան որ այդ քիւրտ վայրենի ցեղերն հայոց դէմ գրգռեց նոյնչափ ալ հայոց նիւթական վիճակն ի նկատի առաւ։ Իր պաշտօնի ժամանակ, երկկողմանի ծրագիր մը պատրաստեց։ Նախ եւ առաջ հայ տարրն աղքատացնել ջանայ զանազան միջոցներով, որ իրենց նիւթական վիճակէն ի զատ, ուրիշ բան մը կարելի չըլլայ խորհիլ. եւ այս ոչ թէ ուրիշ առթիւ, եթէ ոչ կարճ ժամանակամիջոցի մը մէջ կամ գաղթել տալ եւ կամ թէ ձուլել. ահա այս էր իր մի միակ ընդունած պայմանն։ Իր այդ կործանարար ոգեւորութեան մէջ այնքան առաջ գնաց, որ ամբողջ տաճկութիւնը հայոց դէմ լարեց։

Տաւրոսի լերանց շղթաներու մէջ գտնուած քիւրտ աշիրէթներէն շատերն որ անուամբ միայն մահմետական էին, եւ որ ո՛չ ճամի, ո՛չ նամազ եւ ո՛չ բամազան դիտէին, ամէն ժամանակ մեր մէջ եւ մեր ուխտատեղիները կը յաճախէին, ատոնք Արիճ փաշայի ազդեցութեան ներքեւ չինկան։ Այդ կէտը փաշային մտահոգութեան մէջ ձգած էր. վախնալով որ օր մը չէ օր մը հայոց ձեռքն գործիք դառնալով կառավարութեան դէմ ապստամբէին, իրենց բնակած անառիկ լեռան շղթաներու մէջ, ամիսներ կառավարութիւնը զբաղեցնելով, իր ուշադրութիւնը այդ կէտին վրայ կեդրոնացուց, թէ ինչ միջոցներով անհաշտ թշնամութիւններ առաջ բերէ ատոնց եւ հայոց մէջ։ Միմիայն այդ հարցն էր մնացած որ փաշային կը զբաղեցնէր, ինչպէս որ քանիցս ալ փորձեր ըրած եւ ապարդիւն մնացած էր. կը վախնար թէ գեղոսը, Խորենացին, Բիւզանդը. մենք քաջ ծանօթ ենք հայի գրաբառ լեզուին» եւ այլն, եւ այլն...

Ասկէ կը հետեւցնեն թէ հայ ժողովուրդի կեանքը իրենց լաւ ծանօթ է։ Դիտեմ, բայց նոր հասկցայ ճշմարիտն ըսելու համար թէ՝ անոնց համար հայի անցեալը ամէն բան է, ներկան երկրորդական նշանակութիւն ունի, իսկ ապագայի մասին երբէք չեն մտածեր, եւ որու հոգն է հասեր...։

Հիմնուելով այն սխալ հայեացակէտի վրայ՝—նոր մեթոտ եւ նոր ուղղութեան—թէ իմանալով հայոց պատմութիւնը, լաւ տեղեակ լինելով հայոց գրաբառ լեզուին եւ կարդացած լինելով կրօնական ոգւով ներշնչուած հայ մատենագիրները՝ կը կարծէին թէ կարելի է ուսումնասիրել հայ ժողովրդի կեանքը. Մարտին կը ձայնակցէին Նոր կեանքն ու Ամերիկա հրատարակուող Զայն Հայրենեացը. սա տարբերութեամբ որ վերջնոյն էջերը առ հասարակ լեցուած են եղերով, կովերով եւ շուներով, իսկ հայհոյութեան չափը չի կայ. այս առթիւ ուրիշ անգամ այժմ մեր նիւթէն չի շեղելու համար։

Առ հասարակ Մարտի գրողները ոուսահայի եւ թրքահայի միջեւ հրատարակած զզուելի պատերազմով ալ այնտեղ հասան որ սկսեցին անտես առնել հայ ժողովրդին տառապեցուցիչ կեանքը ու անտանելի դրութիւնը. նոյնիսկ անոր առօրեայ ցաւերը ու ժամանակակից պահանջները։ Ասոր ալ հետեւանքը այն եղաւ որ Մարտի գրողներէն եւ ոչ մին գրեց՝ չի կարողանալով այդ բանալ զանազան վէճերէ—մեր ըսածը կը հաստատեն մինչեւ ցարդ այդ կեդրոնի մէջ տեղի ունեցած վէճեր եւ անկարգութիւններ — թէ ի՞նչպէս կապրի հայ ժողովուրդը այն երկրի մէջ, որը Տաճկաստան կը կոչեն, թէ ի՞նչպէս է հայի դրութիւնը. ի՞նչ է անոր պահանջը. եւ ո՞րն է հայաբերին սպառնացող վտանգը, եւ կամ այդ վտանգին դիմադրաւելու այսինչ կամ այնինչ միջոցները։

Եւ ահա այս պատճառներով, նոյն այն մարդիկ, որոնք կը կարծէին թէ աւելի լաւ կը ճանչնան տաճկահայերը, որովհետեւ իրենց մանկութեան ժամանակ «տօլմա, փիլաւ եւ հաց ու պանիր» են կերեր, ուստի «ժողովուրդի սրտէն կը խօսին, ժողովրդեան կեանքէն կը գրեն»—իսկապէս երբէք չի ճանչցան հայ ժողովրդը, եւ անընդունակ եղան ու անընդունակ ալ պիտի մնան արծարծել այնպիսի խնդիրներ որոնց թարգմանը հայ ժողովուրդն է. եւ որոնք դուրս կը բղխին հայ ժողովուրդի ներկայ տխուր եւ անտանելի իրական կեանքէն։

Այլ կերպ վարուեցան Դրօշակ եւ Հնչակ։

* * *

Դրօշակը եւ Հնչակը ոչ թէ միայն հայ գիւղացիին եւ քաղաքացիին քարոզիչներ եղած են, այլ հետազօտիչներ ու անոնց իղձերուն—առանց աղաչելու—բուռն թարգմանը։ Ասկէ կը հետեւցնենք թէ վերջիններս աւելի ճիշդ կրցած են ըմբռնել ու հասկնալ հայ ժողովրդն իր բոլոր պահանջներով։ քան այն մարդիկ որոնք ինքզինքին կը համարեն հայու կեանքին լաւատեղեակներ։

Ռուսահայեր հետեւելով հետազօտիչ գիտութեան ճշգրիտ մեթոտին, ուսումնասիրելով թրքահայերուս կեանքը իր բոլոր երեւոյթներով, նախ պատկերացուցին մեր կեանքը, եւ ապա նոյն այդ իրական կեանքի վրայ սկսեցին հիմնել իրենց բոլոր եզրակացութիւններն ու գործունէութիւնը, իսկ դուք բերանիդ կրակ իյնալիքներ, դուք... ի՞նչ ըրիք. միայն պղծեցիք աշխարհի մէկ սրբութիւնը—յեղափոխութիւնը—ուզեցիք սպաննել հայի սրտի մէջ յեղափոխութեան բոլոր իղձերը, եւ ամլութեան դատապարտեցիք։ Այս չէ եղե՞ր ձեր գաղտնի գործունէութեան «նոր մեթոտի եւ նոր ուղղութեան» բոլոր գաղտնի՞քը, որը դուք կը կոչէք գաղտնի գործունէութիւն։

Դուք պարոններ հաւկիթին մէջ ներքին մատ մը կար, դրդող ատոնց՝ փաշային չի լսելու. յուսահատութեան գագաթնակէտին հասած՝ ինչ ընելիքն չէր գիտեր, ճարահատ հաճի Նաճպատին էֆէնտիին կը դիմէ խորհուրդ հարցնելու, թէ ի՞նչ ընել պէտք է։

Այս վերջինը, առանց վարանելու փաշային խորհուրդ կուտայ Թիզանայ Շէյխ Ճէլալէտտինի թոռ Շէյխ Հիւսէյինին դիմում ընել, եւ խնդրել որ այդ գործն յանուն Սբ. կրօնի յանձն առնելով կարգադրէ։

Փաշան քաջ համոզուելով որ տաճկաց կրօնական պասակարգը ծայրայեղ կրօնամոլ ըլլալով՝ հակառակ է քրիստոնեայ տարրին, նոյնպէս ալ չէյխն հաշտ աչքով չի պիտի կրնար քրիստոնէից վրայ նայիլ, եւ պիտի համակերպի, ուստի՝ տաճկական կեղծ փլիթիքայով մը, չէիր Պիթլիս կը հրաւիրէ, ամէն միջոցներ ձեռք առնելով կը համոզէ, եւ իրնդիրը նոյնութեամբ կը պարզէ։

Շէյիր՝ փաշայի կեղծ ու պատիր շոգոքորթութենէն գինովցած, իսկ միւս կողմէն եւս Ղուրանական պարտականութիւն կատարելու համար, հրահանգներ ստանալով, ճանապարհ կիյնայ դէպի այդ աշիրէթներն. շաբթներ մէջերնին մնալով՝ կրօն ազդութիւն քարոզելով, քիչ շատ ճամբու կը բերէ։ Մինչեւ այդ միջոցին իրենց մէջ հօճա մը չի մտնողներն, այլ եւս կը սկսին իրենց գիւղերու համար հօճաներ ստանիլ. իսկ միւս կողմէն Արիճ փաշան նոյնութեամբ Բ. Դուռը կը գրէ եւ խնդիրը կը պարզէ. Դուռը փաշայի տեղեկագիրը նկատողութեան առնելով, հրամաններ գրկեց, յիշեալ տեղւոյն մէջ ճամիներ եւ դպրոցներ չինել տալու Դրան հաշուին, եւ ներկայ պահանջմանց համաձայն հօճաներ կարգելու։

Արիճ փաշան՝ քիւրտ աշիրէթներն աւազակներն ու գողերն հայոց դէմ լարելու մասին պատրաստուած ծրագիրն իրագործելէ յետոյ, անձայն եւ խեղդուկ ծրագիր մըն ալ նահանգի կառավարութեանց համար դուրս բերաւ, հինգ յօդուածներէ բաղկացեալ. Ա. հարկահաւաքութիւն, Բ. միլիթիմութիւն, Գ. տրոց յաւելումն, Դ. պաւաճան հայերն պաշտօնի կոչել, Ե. դատարաններու մէջ հայոց կողմանէ եղած բողոքներուն անլսելի մնալը։

Ահա՛ թէ ինչպէս սկսաւ գործադրուիլ, եւ ատոր գործադրումով, Մուշը իր գաւառներով ի՛նչ՝ ահռելի հետեւանքներու հաւաք։

ՄԱԿԱՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

(Շարունակելի)

մազ փնտռողի մը պէս ելեր Դրօշակի մէջ բան կը որոնէք։ Բարեկամաբար կը խրատեմ որ չի յոգնիք. զի կըսեն թէ՝ ատենօք խօզը կայցելէ թագաւորի պալատը եւ կը չրջի բոլոր մարգարիտներու տեղը. վերադարձին խօզին ընկերները կը հարցընեն թէ իրականութիւն է որ թագաւորի պալատը լի է մարգարիտներով. փիւֆ կըսէ, կրողը տանի, գետինը քերած ատենս միշտ աղբի կտորուանքներ կելլեր։ Ի՛նձը չի գիտեր թէ աղբի կտորը նախապէս իր թաթերու հետ ինքը փոխադրած է հոն։ Կարդացէք անգամ մըն ալ Դրօշակի հոկտեմբեր սմսոյ թիւը եւ Զայն Հայրենեացի 19րդ թիւը. այն ատեն պիտի տեսնէք թէ երբէք չեմ սխալած համեմատութեանս մէջ։ Դրօշակ կըսէ. «կռիւը ոչ թէ միայն անհրաժեշտ է. նա նոյնիսկ անխուսափելի է. ի՞նչպէս զինել եւ զինավարժել ժողովուրդը առանց կռուի երկրի մը մէջ, ուր քրիստոնեաներու արգիլուած է զէնք կրել» իսկ դուք կըսէք ի՞նչպէս զինավարժել առանց կռուի ժողովուրդը»։

Դրօշակ ունի իր հասարակութիւնը եւ արդէն յայտնի գաղափարները ու ձգտումները. ան արդէն հաժողուած է թէ. անհրաժեշտ է իրականացնել այդ գաղափարն ու ձգտումները. եւ ահա Դրօշակ այդ վերջնոյն վրայ է կեդրոնացուցեր իր բոլոր ուշադրութիւնը. միշտ հետազօտելով, անդադար կրկնելով նոյն ճշմարտութիւնը, անդադար յիշեցնելով իր գաղափարները. անդադար հալածելով իր հակառակորդները (որոնց պատճառը ուրիշ բան չէ, եթէ ոչ ռուսահայական եւ թրքահայական հակասութիւն) անդադար քննադատելով վերանորոգութեան արգելք հանդիսացող չըլըխտիները։ Եւ անկասկած Դրօշակ այսպէս կը շարունակուի առանց իր ուղղութիւնն ու սկզբունքը կորսնցնելու. մինչեւ որ կիրագործուին իր ձգտումներն եւ հայ ժողովրդի փափաքներն ու իղձերը։

Իսկ դուք ալ շարունակեցէք ձեր գլխի կոնծունքը, անդադար կրկնելով մեռանք, կորանք, ալ յոյս չկայ, եւ ամէն բան վերջացաւ։ Կը կրկնեմ. կրկնեցէք ձեր այդ վայնասուն զի այդ Սուլթանին ականջին խիստ քաղցր կը հնչէ։

(Ահրակցի)

Ուստր, 24 Յունուար

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նիւ-Եորքի մեր մէկ թղթակիցէն շատ հետաքրքրական տեղեկութիւններ կը ստանանք Միս Մօտ Կօն իտալացի հայրենասէր աղջկան ի Միացեալ Նահանգս ըրած ճանապարհորդութեան մասին։ Այդ երիտասարդ աղջիկը Ամերիկայ գացած է ի նպաստ Պօէրներու և իտալական աղատութեան պայքար մղելու բանախօսութիւններ և դասախօսութիւններ ընելով։ Զինքը ընդունելու համար հսկայ պատրաստութիւն մը տեսած էին, որուն պիտի մասնակցէին բոլոր իտալական ընկերութիւնները, բայց դժբաղդաբար օրիորդը բերող նաւն մէկ օր ուշանալով փոխանակ կիրակիի երկուշաբթի միայն հասած է, այնպէս որ գործաւորներն զբաղած էին երբ իտալանտուհին ամերիկեան հողին վրայ ոտք կոխեց։ Այսու հանդերձ հոն բազմութիւն մը ոգեւոր ընդունելութիւն մը ըրած է հռչակաւոր աղջկան։ Զորս ձիով կառքով մը իր իջեւանը առաջնորդուած է Միս Մօտ առանց մաքսատունէն անցնելու։ Բաղմիցս ըսած է թէ իր ճանապարհորդութեան նպատակն է իտալանտացւոց մէջ հայրենասիրական ոգին կեդրոնացնել և զիրենք գրգռել Պօէրներուն օգնելու համար, ընդդէմ անգլիոյ ճնշիչ կառավարութեան։

Միս Մօտ Կօն պիտի շարունակէ պայքարել, մինչեւ որ իւր հայրենիքն աղատ փոքրիկ հանրապետութիւն մը կազմէ։ Ասոր համար, բնաւ աւելի յարմարագոյն ժամանակ չէր պատահած, վասն զի այս միջոցիս միայն վեց հազար անգղիական զօրք կայ Իռլանտայի մէջ։ Գալով իռլանտացւոց որք ժամանակին անգղիական բանակին գլխաւոր զօրութիւնը կը կազմէին, այսօր հազիւ 25 հազար հոգի ունին անգղիոյ բանակներուն մէջ. յուսալի է որ ատոնք ալ քիչ ատենէն իրենց զէնքերն նետելով չի պիտի ուզեն պատերազմիլ իրենց հայրենիքը ճնշող պետութեան համար։

Միս Մօտ Կօն միայն մէկ ամիս պիտի մնայ Միացեալ Նահանգաց մէջ. նա պիտի այցելէ Նիւ-Եորք Փիլատէլֆիա, Պոսթօն, և ուրիշ մեծ քաղաքներ, նա պիտի երթայ նաեւ Սէն-Լուի, Շիքակօ, Օմահա. բոլոր այս քաղաքներուն մէջ բանախօսութիւններ պիտի ընէ միացնելով Պօէրներու խնդիրն Հօմ-Ռուլի հետ։

— Փետրուար 5ին Ժակոբոստալէն Լոնտոն կը հեռագրեն թէ՝ պօէրներու ժէնէրալ Քրոնիէ ստիպուած է սայլերէն բանակ մը կազմել, որովհետեւ սայլերու եզները ուժասպառ եղած ըլլալուն չեն կրնար առաջ երթալ։ Այժմ այդ բանակը կը ռմբակոծուի եղեր անգլիական ժէնէրալ Կէլլի Դէնէնի կողմէն։

Ուրիշ հեռագիր մը, նոյն տեղէն կը հաղորդէ թէ՝ ժէնէրալ Դէնէնի մեծ քանակութեամբ պաշար, երկու վագոն հրացան 10 արկղ պայթուցիկ նիւթեր խլած է պօէրներէն և կը շարունակէ ռմբակոծել ժէնէրալ Քրոնիէի բանակը։

Ժէնէրալ Ֆրէնչ Քէմպրիջէն գացած է օգնելու Դէնէնիին Քրոնիէն հալածելու։

— Լօրէնցօ Մարքէզէն «Տէյլ Մէյլ»ի կը հեռագրեն թէ՝ Թրանսվալի կառավարութիւնը յայտարարած է որ 6000 նոր Պիւրկերներ զէնք վերուցած են։

— Լօրա Ռօպէրտսը այցելած է Ժակոբստալի վիրաբուժարանը և կը յայտարարէ թէ պօէրները մեծ խնամքով անգլիացի վիրաւորեալները կը խնամեն եղեր։

— Պօէրները յաղթող հանդիսացած են Ռէնդպուրկի քով։

— Լատսմիտի մէջ բոլոր պաշարեալներու թիւը 17000 է։ Դեռ քանի մը շաբթուան կերակուրի պաշար ունին։

— Քէմպրիջէյ արդէն աղատուած է. անգլիացիք հոն մտած են։

Պօէր զօրավար Քրոնիէ դիմադրած չէ։

— Լի Հոնկ-Զանկին հրամայուած է կործանել բարեկորոգիչ կանք իւ Վայի նախնիքներու գերեզմանները և բարեկորոգիչին գլուխը 100,000 թայլ գնահատել։

Հրամանը չինական կայսեր կողմէն է. բայց կը կարծուի որ այրի կայսերուհու ազդեցութեամբ եղած է, որը այսպէս կարտայայտէ իր ատելութիւնը դէպի բարեկորոգիչը։

— Պօէրները Քէմպրիջէն հեռացան առանց դիմադրելու, բայց արշաւեցին դէպի Կաբ և կապառնան Ռօպէրտսի յարաբերութիւնները խզել անգլիական մէյս զօրքերու հետ։

— Փետրուար 2ին Պուքրէշի մէջ դիշերը սպաննուած է Ֆիլիմվսկի անունով յայտնի պուլկար մը, որը թուրքաց լրտես կը կարծուէր։

Սպաննողները յայտնի չեն։

— Եգիպտացի Միւֆթիի մը Սուլթանի հակառակ տուած ֆէթվան շատ վատ տպաւորութիւն գործած է Պոլսոյ մէջ։

— Սուլթանի իրատէով յանձնախումբ մը կազմուած է Պուլկարիոյ հետ կարգադրելու անցագրերու, սահմանագլխի պահպանութեան և. խնդիրները։

— Ասիսինիոյ թագաւորը հրամայած է զօրքը համախմբել։ Մինչեւ հիմա հասկցուած չէ այդ հրամանի նպատակը և մանրամասնութիւնները։ Մ/այն կը հաւատացնեն թէ Մենելիքը Եւրոպական անցքերու մասին տեղացող հեռագիրներուն վրայ, այդ կարգադրութիւնը ըրած է։ Աստրիական թերթ մը կըսէ թէ Բարիզէն և Բեթերսպուրկէն եկած խորհուրդները անհետեւանք չեն մնացած և Մենելիքը կուզէ օգտուիլ Անգլիոյ դժուար կացութենէն և Վերին Նեղոսի կողմերը բան մը կուզէ փրցնել։

ԹԱՏՐՈՆ

Անցեալ շաբաթուան գիշեր «Վէսէլօ» հայ թատերական խումբը զինուորական Գլիպի կողմանէ հրաւիրուած էր ներկայացման մը համար. մեծ յաջողութեամբ ներկայացուցին «Զաւալլը Զօճուկ» թատերախաղը և Մոլիէրի «Բուրսօնեակ» կատակախաղը, թէ օտար և թէ մեր աղգայիններէն շատերը գնահատեցին ոյն ներկայացումը, որն որ «Վէսէլօ» խմբին իրենց աշխատութեան արդասիքն է։

—)·(—

ԴԱՐԵՋՐԱՏՈՒՆ **ՍԱՆԹՐԱԼ**

Տ. ԹԻԻՖԷՆԿՃԵԱՆԻ

Մուսալրի Թաղապետական պարտիզին դիմաց, նախկին Անկել Սլավօֆը

Պատիւ ունիմ ծանուցանելու Արգոյ հասարակութեան թէ՝ այս անգամ մեծաւ պատրաստութեամբ բացած եմ սոյն գարեջրատունը, յուսով եմ թէ չը պիտի զլանայ պատուարժան հասարակութիւնը զիս քաջալերել։

Ե. ՃԱՆԿԻԼԵԱՆ

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ ԾԽԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Թիւ 389 Իսկիզ-պաշի

Կը վաճառուի ծխախոտ, բօսթայի եւ աղերսագրի ամէն տեսակ բուլեր նաեւ զանազան տեսակ սիկարներ։

94 Թուականին հրապարակ եկած Պուլկարիոյ գահաժառանգ Պորիսի պատկերազարդ քառթ-փոսթալներ, որ այժմ չեն գործածուիր։ Նոյնպէս եւ կը վաճառուի «Շարժում»։

Շարժումը կը ծախուի նաեւ. Նամակատան դիմաց նոր բացուած փոքրիկ գրատունը։

Նաեւ Շարժումը կը ծախուի Ա. Զարբհանէլեանի գրատունը եւ իրմբագրութեանս մէջ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄԻ"

Կը ապագրուին ամէն լեզուէ այցեւոմս, հասցէոմս, նամակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահագդ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՑԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

ՊՕՐՍԱ

Վաղնա 11 Փետրվար

Վագոն	Լիպրա	Ֆրանք	
ՊՈՒՂՏԱՑ	53—57	9.50—11 25	
ՄԻՍԻՐ	55—58	6.20—6.50	
ՍԱԲԱ	—	—	եօդ
ԵՈՒԼԱՖ	—	—	»
ՖԱՍՈՒԼԵԱ	—	—	»
ՏԱՐԸ	—	—	»

Առապա	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՑ	55—56	10 60—10.20
ՍԱԲԱ	40—44	6.80—9.40
ԵՈՒԼԱՖ	35—36	5.20—5.30
ՄԻՍԻՐ	55—58	6.80—7.20
ՏԱՐԸ	55—58	5.50—60
ՖԱՍՈՒԼԵԱ	100 գիլ	13—20

Հէր կիւն կէլէն մալ

ՊՈՒՂՏԱՑ	—	առապա
ՍԱԲԱ	—	»
ԵՈՒԼԱՖ	—	»
ՖԱՍՈՒԼԵԱ	—	»
ՄԻՍԻՐ	—	»
ՏԱՐԸ	—	»

Առապա մուամէլէսի Դաբոլէոն 22.40 ֆրանք հիսապը իլէ տիր.

Печатница „Взаимность" Варна